


Լենինականյան հուճոր



Լոռեցի Համբոն իր որդուն տանում է հարևան գյուղի քահանայի մոտ և ասում՝

- Տեր Հայր, շնորհալի որդուս բերել եմ մոտդ, որ գրաճանաչ դարձնես, տարեկան հախը որքա՞ն աս:

- Հարուստներինը՝ 10 թուման աս, քեզ նմաններինը՝ 2:

- Վա՛յ, ի՞նչ ես ասում, երկու թուման ունենալի մի էլ կաննի:

- Դեմ չեմ, զնա առ, երկու էլ կունենաս,- ասում է քահանան:

Կարո՞ն փոքր երեխայի ակազններից բռնած մտցնում էր լոգարանի քրի մեջ, դուրս բերում: Երեխան ուժեղ ճչում էր: Այդ պահին ներս է մտնում հարևանը և հարցնում.

- Օո~, ի՞նչ կենես:

- Երեխին կլողցնես:

- Հըբը ինչի՞ ես ակազններից բռնես:

- Որ մատներս չվառվին...

Քյավառցին հյուր է գնում Լենինականում: Տանտերը հարցնում է՝ ինչքա՞ն ես հյուր մնալու:

- Մինչև վոճվելու:

- Եղբանի քի՞չ...

- Օնես, ինչի՞ բանտ ընկար:

- Օխելու պատճառով:

- Ե~, ծխելու համար բանտ կնստցնե՞ն:

- Հա, ես որ հազացի, խանութի պահակը քնից արթնացավ:

Կոլոտ Կարոն մտնում է վարսավիրանոց՝

- Վարպետ Սաքո, քանի՞ հաճախորդ ունես:

- Երեք հոգի կա,- պատասխանում է վարսավիրը:

Գնում է երեք օր անց գալիս:

- Վարպետ, էսօր քանի մարդ կա սպասող:

- Հինգ,- ասում է Սաքոն: Մի քանի օր անց էլի է գալիս ու նման պատասխան ստանալով, նորից կորչում: Սաքոն կանչում է իր աշակերտին ու պատվիրում՝ մի գնա դրա հետևից, տես, թե ո՞ր է գնում այդ մարդը:

Աշակերտը գնում է, քիչ անց վերադառնում՝


- Վարպետ, էդ մարդն ուղիղ ձեր տուն մտավ...

Գյումրեցի հուճորիստ Պոլոգ-Մուկուչը, ծովափում շրջելիս, տեսնում է օգնության կանչող մի խեղդվող կնոջ և շտապում է օգնության: Տեսնելով կնոջ վզի ոսկյա շղթան՝ ասում է՝

- Քուր ջան, որ խեղդվելուց փրկեմ, վզիդ ցեպն ընծի կուտա՞ս:

- Չէ~, նեղ օրվա համար եմ պահել,- գայրանում է խեղդվողը:

Հրանտ Սարգսյան



УРОК 16
ԴՄԱ 16

Личные местоимения

В армянском языке, как и в русском, личные местоимения имеют 3 лица: первое, второе, третье и два числа: единственное и множественное. I лицо ед. ч. ես [ес] я II лицо ед. ч. դու [ду] ты III лицо ед. ч. նա [на] он, она, оно I л. мн. ч. մենք [мэнк'] мы II л. դուք [дук'] вы III л. նրանք [ныранк'] они

Обратите внимание: в отличие от русского, в армянском языке личное местоимение III л. ед. ч. не изменяется по родам, в русском языке ему соответствуют местоимения: он, она, оно. Նա եկավ: [на екав] Он пришел. Она пришла. Նա խոսում է: [на хосум э] Он говорит. Она говорит. Если նա указывает на неодушевленные предметы, то считается указательным местоимением. В этом случае в им. и вин. падежах вместо նա употребляется в основном указательное местоимение այն [айн], например:

Ես ստացա նամակ, այն սեղանի վրա է: [ес стаца на-мак, айн сэх'ани вра э] Я получил письмо, оно на столе. Ես կարդացի այդ վեպը, այն ինձ շատ դուր եկավ: [ес кар-даци айд вэпы, айн индз шат дур екав] Я прочел этот роман, он мне очень понравился.

Запомните: местоимение դուք, как и в русском языке вы, употребляется при

вежливом или официальном обращении к одному лицу.

В армянском языке, как и в русском, местоимения склоняются и имеют семь падежей: именительный, родительный, дательный, винительный, исходный (отложительный), творительный, местный. Заметьте, что в армянском языке есть исходный (отложительный) падеж, которого нет в русском.

Именительный падеж

В предложении личные местоимения в им. п. выступают в роли подлежащего или именной части составного сказуемого, например: Ես գնում եմ տուն: [ес гынул эм тун] Я иду домой (ես – подлежащее). Այդ ես եմ: [айд ес эм] Это я (ես – именная часть сказуемого).

Как вам уже известно, в армянском языке во всех спрягаемых формах глагола выражается значение лица, поэтому местоимения первого и второго лиц в функции подлежащего часто опускаются, в отличие от русского языка, где при глаголе прошедшего времени употребление местоимения обязательно. Ср.:

Եկա և սկսեցի աշխատել: [ека ев ыскысеци ашхатэл] (Я) пришел (-ла) и начал (-а) работать. В армянском предложении подлежащее отсутствует, но оно однозначно определяется по спрягаемой форме глагола եկա և սկսեցի – I л. ед. ч. и означает только я пришел и я начал, тогда как в русском предложении: Пришел и начал работать вне кон-

текста неясно, кто пришел: я, ты или он.

Местоимения I и II л. не опускаются, если:

1) говорящий хочет выделить, подчеркнуть действующее лицо: Ես եմ ասում: [ес эм асум] Я говорю.

2) в предложении есть противопоставление: Ես խոսում եմ, իսկ դու չես լսում: [ес хосум эм, иск ду чэс лысум] Я говорю, а ты не слушаешь.

Напоминаем, что в армянском предложении вспомогательный глагол ставится после акцентно выделяемого слова. **Родительный падеж** Родительный падеж личных местоимений имеет следующие формы: I л. ед. ч. իմ [им] мой, моя, мое II л. ед. ч. քո [к'о] твой, твоя, твое III л. ед. ч. նրա [ныра] его, ее I л. мн. ч. մեր [мэр] наш, наша, наше, наши II л. мн. ч. ձեր [дээр] ваш, ваша, ваше, ваши III л. мн. ч. նրանց [ныранц] их

Формы род. п. армянских личных местоимений соответствуют русским притяжательным местоимениям, но, в отличие от них, не согласуются с существительным. Примеры: իմ ընկերը [им ынкеры] мой товарищ – իմ ընկերները [им ынкернэры] мои товарищи իմ գիրքը [им гирк'ы] моя книга – իմ գրքերը [им гырк'эры] мои книги մեր գիրքը [мэр гирк'ы] наша книга – մեր գրքերը [мэр гырк'эры] наши книги քո գիրքը [к'о гирк'ы] твоя книга – քո գրքերը [к'о

гырк'эры] твои книги ձեր գիրքը [дээр гирк'ы] ваша книга – ձեր գրքերը [дээр гырк'эры] ваши книги նրա գիրքը [ныра гирк'ы] его (ее) книга – նրա գրքերը [ныра гырк'эры] его книги

Словарный запас

Տրանսպորտ և փոխադրում – транспорт и передвижение օդանավակայան – аэропорт – прибытие ինքնաթիռ – самолет ինքնաթիռի ժամանում – прилет տոմս – билет վաուչեր – ваучер վիզա – визա փաստաթղթեր – документы անձնագիր – паспорт Իմ վիզան երկու շաբաթով է: – У меня виза на две недели.

Որտե՞ղ եմ ստանում ուղեբեռը: – Где выдают багаж?

Որտե՞ղ է մեր ավտոբուսը: – Где наш автобус?

Օդանավակայան – թռիչք – аэропорт – отъезд Որտե՞ղ է օդանավակայանը: – Где аэропорт?

Թռիչք կա դեպի ...: – Есть ли рейс на ...?

Ժամը քանիսի՞ն է ինքնաթիռը թռչում դեպի ...: – В котором часу вылетает самолет на ...?

Թռիչքը հայտարարված է: – Посадка объявлена?

Գրանցումը սկսվել է: – Регистрация началась?

Երբ է ժամանում ինքնաթիռը ...: – Когда прилетает самолет в ...?

բեռ, ուղեբեռ – багаж ձեռքի ծանրոց – ручная кладь

Курс ведет Арmine ОБСЕПАН

ԻՆՆ ԵՐԱՆԻՆԵՐ
Ա. «Երանի~ հոգով աղքատներին, քանզի նրանցն է երկնքի արքայությունը» (Մատթ. Ե 3)

Մեր Տեր Հիսուս Քրիստոս մարդկանց փրկության ճանապարհը քարոզեց ինն երանիների միջոցով, որոնք յուրա-հատուկ պատվիրաններ են և չունեն Հին Օրենքին բնորոշ հրամայական-հարկադրական ոճը, այլ հորդորաբար կոչում են մարդկանց ներքին վերափոխության, սրբության և աստվածացման: Երանությունը նշանակում է հոգևոր բարիքների ամբողջություն, ծայրագույն երջանկություն և կատարյալ ուրախություն, այն ամենը ինչ բնորոշ է հավիտենական կյանքին և երկնքի արքայությանը: Եվ երանի են նրանք, ովքեր իրենց մեջ կրում են Աստծո արքայությունը, այսինքն՝ ճշմարիտ հոգևոր կյանքի կենդանի իրականությունը:

Ինն երանիներն էպես շողկապված են իրար և ներկայացնում են հոգևոր առաջընթացի աստիճանակարգերն ու սկզբունքները, յուրաքանչյուր երանին կատարելու համար անհրաժեշտ է իրագործել նախորդները: Ըստ հայերի՝ Ինն երանիները հոգևոր կյանքի և կատարելության հասնելու խրատաշար են, որն իր մեջ խտացնում է քրիստո-նական կյանքի ամբողջ պատկերը:

Մեղքի պատճառով ընկած մարդկային բնությունը բռնազատված է չարի կապանքներից. մարդու հոգին լցվել է բազմաթիվ մեղքերով և կորցրել իր նախաստեղծ ազատությունը: Քրիստոս ուսուցանում է, որ ճշմարիտ հոգևոր կյանքի հասնելու համար նախ և առաջ պետք է աղքատանալ և թոթափվել մեղքից, հեռանալ և ազատվել չարի կապանքներից, որպեսզի հոգին բացազատվի Աստծո սրբարար լույսի առջև: Հոգով աղքատությունը նշանակում է հեռացում, օտարացում և հրաժարում մեղքի ոլորտից, որոշակի ներքին դարձ առ Աստված: Չարի մերժումը մարդու կյանքի ազատության վկայությունն է: Ով պատրաստվում է դառնալ երկնքի արքայության ժառանգորդ, նա պետք է կամովի դառնա առ Աստված և հրաժարվի իր մեղսահակ կամքից: Հոգու աղքատությունը եկեղեցու հայրերի կողմից կոչվում է նաև կամավոր խոնարհություն: Մեր փրկության համար Տերն Ինքը կամովի խոնարհվեց և մտավ մեր աղքատության մեջ, խոնարհվեց Իր աստվածային բարձրությունից և ծառայի կերպարանք

ստացավ: Հետևաբար՝ կամավոր և ոչ հարկադրված խոնարհությամբ մարդու մեջ նորոգվում է իր արարչադիր պատկերը, մարդը նմանվում է Հիսուս Քրիստոսին, որ ճշմարտապես խոնարհվեց՝ մեզ ազատագրելու և աստվածացնելու համար: Խոնարհությունը հիմքն ու արմատն է բոլոր առաքինությունների, մայրն է բոլոր հոգևոր բարիքների: Խոնարհ մարդը զերծ է մնում չարի որոգայթներից, հարգվում է մարդկանցից և մեծարվում Աստծուց: Խոնարհությունը ձեռք բերելու համար պետք է հեռանալ հպարտությունից և սեփական եսը կերակրելու բոլոր առիթներից. հատկապես պետք է խուսափել գովեստներից: Երբ մեկն իրեն անարժան է համարում որևէ բարիքի, սիրով է ընդունում հանդիմանությունը, միշտ պատրաստ է անշահախնդիր ծառայել մարդկանց, ամեն ինչում և ամենից առաջ փնտրում է Աստծո փառքը, այդպիսին մոտեցել է ճշմարիտ խոնարհության մատույցներին:

«Գանձասար» աստվածաբանական կենտրոն